

"Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈւՎԿ ԱԿ գլխավոր գործադիր տնօրեն պ-ն Արմեն Գաբրիելյանի Բացառիկ հարցազրույցը պորտալին:

**- Պ-ն Գաբրիելյան, արդյո՞ք Ձեր կազմակերպությանը հաջողվեց ՀՀ-ում գյուղատնտեսական վարկային ներդրումներով լինել առաջատարը վարկային կազմակերպությունների մեջ:**

- Մենք իրոք մեր առջև խնդիր ենք դրել լինել գյուղատնտեսական վարկային ներդրումներով առաջատարը ՀՀ վարկային կազմակերպությունների մեջ: Եվ դա ինքնանպատակ չէ, այն բխում է մեր կազմակերպության էությունից և կազմակերպական կառուցվածքից:

"Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ունիվերսալ վարկային կազմակերպությունը հանրապետությունում գործող միակ կոոպերատիվ ֆինանսական հաստատությունն է: Այն պատկանում է իր իսկ անդամներին:

Մենք ոչ թե մոտ ենք կանգաձ ֆերմերներին, այլ հենց նրանց հեղինակած կառույցն ենք և ձգտում ենք մատչելի վարկային ծառայություններ ապահովել նրանց համար: Սրանումն է առաջատարը լինելու հրամայականը:

Կարծում եմ մեր տեսլականը առաջիկա տարիներին լիովին իրագործելի է:

**- Ներկայումս Դուք ֆինանսական ծառայություններ եք մատուցում միայն ՀՀ վեց մարզերում՝ Տավուշում, Կոտայքում, Արարատում, Վայոց Ձորում, Սյունիքում եւ Արմավիրում: Այս ճգնաժամային պայմաններում Դուք չե՞ք հրաժարվել լայնացնել Ձեր գործունեության աշխարհագրությունը: Մասնավորապես, դուք պլանավորում եք 2013 թ. գործունեության ծածկույթում ներգրավել ամբողջ հանրապետությունը եւ մինչեւ 2015 թվականի ավարտն ունենալ մեկական մասնաճյուղ յուրաքանչյուր մարզում:**

- Մեր աշխատակազմը համաշխարհային ֆինանսական ճգնաժամը դիտարկում է որպես իրավիճակային մարտահրավեր և մենք ամեն ինչ անելու ենք մեր զարգացման պլաններից չջեղվելու համար:

Մենք ֆինանսատեխնիկական և խորհրդատվական համագործակցության պայմանագիր ունենք ԱՄՆ Գյուղդեպարտամենտի և ԱՄՆ Ֆարմ Կրեդիտ Համակարգի հետ: Համագործակցության արդյունքում մենք երկրորդ կիսամյակում հնարավորություն կունենանք կրկնապատկել մեր կանոնադրական կապիտալը, որը մեզ հնարավորություն կտա դիմել միջազգային ներդրողներին ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու համար: Բանակցություններ ենք վարում մի քանի ներդրումային ընկերությունների հետ 2010 թվականին լրացուցիչ ռեսուրսներ ձեռք բերելու համար:

ԱՄՆ Ֆարմ Կրեդիտ համակարգը իր զարգացումը ապրեց Մեծ Ճգնաժամի

տարիներին՝ ամերիկյան իշխանությունների, մասնավորապես ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի հեռատես մոտեցումների շնորհիվ: Երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսներ տրամադրվեցին ամերիկյան կոոպերատիվ բանկերին, իսկ նրանք արդեն վաթսուհարյուրների վերջերին տոկոսներով հանդերձ, լիովին հետ վճարեցին այդ վարկերը՝ ամբողջացնելով և ամրապնդելով կոոպերատիվ վարկային համակարգը:

Կարծում եմ, որ առաջին կոոպերատիվ վարկային կառույցի գոյությունը և կատարած աշխատանքը մեր օրերում չի վրիպի նաև ՀՀ կառավարության ուշադրությունից և աջակցությունից:

Ինչ վերաբերում է մասնաճյուղային ցանցին, այո, այս տարի մարզերում ներկայացուցչություններ բացելու ենք և շարունակելու ենք ընդլայնել մեր գործունեության աշխարհագրությունը:

**- Ձեր Կազմակերպությունը հաջողությամբ մասնակցել է ՀՄՀ-Հայաստան Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում ծրագրի առաջին փուլին: Որքանով հայտնի է Հազարամյակների Մարտահրավեր Կորպորացիան դադարեցրել է ֆինանսավորումը Հայաստանին: Դուք հույս ունե՞ք մասնակցել վարկավորման ծրագրի երկրորդ փուլին:**

- ՀՄՀ-Հայաստան Ջրից դեպի շուկա բաղադրիչի առաջին փուլի գնահատման արդյունքներով Ֆարմ Կրեդիտը ճանաչվեց որպես լավագույն վարկավորող և մեզ հնարավորություն է տրվել երկրորդ փուլում ՋԴՇ ծրագրի նպատակային վարկավորում կատարել մինչև մեկ միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով: Ծրագրի սկսման պահին "Ֆարմ Կրեդիտի Արմենիայի" նկատմամբ բացակայող վստահությունը ՀՄՀ-Հայաստան գրասենյակից մենք վաստակեցինք գրասենյակի կողմից կատարված վարկային մոնիտորինգների և համատեղ աշխատանքից հետո: ՋԴՇ ծրագրի երկրորդ փուլի վարկավորման աշխատանքները այժմ ակտիվորեն ընթանում են, ցավոք, վարկավորման երկրորդը փուլը սկսվեց վեց ամիս ընդհատումով:

**- Անցած տարվա համեմատ որքանո՞վ է նվազել կամ ավելացել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի քանակը: Նկարագրեք Ձեր վարկային պորտֆելի կազմվածքը:**

- Մեր բոլոր վարկերը այս պահին գյուղմթերքների արտադրության կամ գյուղատնտեսության սպասարկման ոլորտում են: Տրամադրվող վարկերի քանակը և պորտֆելը գրեթե կրկնապատկվել են անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Առ այսօր տրվել է 95 վարկ, 301 միլիոն դրամ ընդհանուր գումարով, որից 155 միլիոն դրամը ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում: Մեր միջին վարկի մեծությունը կազմում է 3 միլիոն դրամից ավելի: Ընթացիկ գործող պորտֆելը 241 միլիոն դրամ է: Չունենք ժամկետանց ոչ մի վարկ:

Այս տարի գործարկել ենք նոր պրոդուկտներ՝ գյուղական համայնքներում գործող ՓՄ ձեռնարկություններին տրվող վարկեր և գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն: Քառասուն ձիաուժանոց չորսքարշակ շինական լավագույն մակնիշի տրակտորների առաջին խմբաքանակը մեր անդամներին լիզինգով կտրամադրենք սեպտեմբեր ամսին:

**- Պետք է նշել, որ հեռավոր գյուղական համայնքների բնակչությանը վարկերի տրամադրումը կրում է եւ հայրենասիրական բնույթ եւ ինչ-որ տեղ պարունակում է ռիսկի գործոն: Դուք այդպես չե՞ք գտնում:**

- Այո, իհարկե: Ձեր նշած գործոնները հավասարապես ընդունելի են նաև մեզ համար: Այնուամենայնիվ մենք պատրաստ ենք աշխատել Ձեր վերը նշած մարզերի հեռավոր գյուղական համայնքներում տնտեսվարող ցանկացած վարկունակ գյուղացու հետ, ով կամովի կանդամագրվի մեր կառույցին:

**- Արդյո՞ք փոխվել են վարկավորման պայմանները ճգնաժամի հետ կապված:**

- Փոխվել են այնքանով, որքանով ձգտում ենք շուկայում միշտ գրավիչ և մրցունակ լինել:

**- Ձեր գործունեության հետ կապված որե՞ն անեկդոտ կամ զվարճալի պատմություն կպատմե՞ք:**

- Կոռպերատիվի հիմնադրման ժամանակ մեր վարկային մասնագետներից մեկը տնտեսության ուսումնասիրություն էր կատարում ֆերմերներից մեկի տնտեսությունում: Խոտի դեզի տակ թաքնված բակապահ շանը հաջողվել էր մի փոքր կծել վարկային մասնագետի ոտքը:

Չնայած վարկը տրամադրելու վարկային մասնագետի ջանքերին՝ վարկային կոմիտեի ժամանակ ինչ-ինչ ռիսկերի պատճառով հետաձգվեց վարկի տրամադրումը: Ֆերմերը բողոքել էր, թե իր շունն է եղել վարկի հետաձգման պատճառը...

[http://banker.am/guests.php?lang=2&color=r&g\\_id=38](http://banker.am/guests.php?lang=2&color=r&g_id=38)